ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻ՞Ն, ԹԵ՞Ն ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

Կամ՝ փարիզյա՞ն, թե՞ մոսկովյան սկզբունքներ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Ադրբեջանում նախագահական ընտրությունների ելքն աստիճանաբար հստակվում է, եւ գործող նախագահի որդու ընտրությունը դառնում է անայլընտրանք, անգամ հայաստանյան պաշտոնական գործիչներն են ստիպված հայտարարել իրենց քաղաքական հարգանքի հավաստիքն առ Իլհամ Ալիեւի խաղաղասիրական նկրտումները, ինչպես ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար եւ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը:

Արցախի հիմնահարցի կարգավորման նոր շրջափուլն այսպիսով սկսված է, եւ պատահական չէ, որ համանախագահներից Ռուսաստանը, միակ գերտերությունը, որը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ անմիջական սահմանային եւ աշխարհաքաղաքական դարավոր շահեր ու չլուծված խնդիրներ ունի, վերադասավորումներ է կատարում՝ ուժեղացնելով իր դիրքերը, զուգահեռաբար Կազիմիրովի էքս-համանախագահի շուրթերով հնչեցնում է Արցախի հիմնահարցի կարգավորման հին եւ նոր տարբերակների համադրումից ծնված առաջարկ «Նեզավիսիմայա գազետա» թերթում: Հայտնի է, որ եռանախագահության կազմում իր ներկայացուցիչ Գրիբկովից բացի Արցախի հիմնահարցի կարգավորման բանակցություններում Ռուսաստանն իր դիրքորոշումն ու շահերը առաջ էր մղում արտգործնախարարի առաջին տեղակալ Տրուբնիկովի միջոցով: Ի դեպ, մինչ այս պաշտոնը Տրուբնիկովը եղել է ՌԴ արտաքին հետախուզության ղեկավարը: Օրերս Գրիբկովին փոխարինեց Մերզլյակովը, որն ավելի բազմափորձ դիվանագետ է, եղել է Ղազախստանում ՌԴ դեսպան եւ ներկայացրել է Ռուսաստանի շահերը Կասպյան ավազանի բաժանման դժվարին խնդրում, այսինքն նա ծանոթ է Ադրբեջանի դիվանագիտական եւ քաղաքական խոհանոցին:

Փարիզյան սկզբունքներ անվամբ հայտնի եւ ամերիկյան Քի Վեստում քննարկված (առ այսօր էլ Հայաստանում չգաղտնազերծված) Արցախի հիմնահարցի կարգավորման տարբերակից բացի, որը համարվում է հակամարտության փաթեթային կարգավորման ձեւ, պաշտոնապես դեռ ոչ մի միջազգային տեսակետ չէր հնչել: Բայց ահա Մոսկվայից ասպարեզ է նետվել ռուսաստանյան հին համանախագահի առաջարկը, որը հմուտ դիվանագետ է, եւ ամենակարեւորը՝ քաջատեղյակ Հայաստանի եւ Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակին: Յուրօրինակ մոսկովյան սկզբունքներ: Կազիմիրովը Տրուբնիկովի փորձագիտական խմբի անդամն է, հետեւաբար Արցախի հարցի բոլոր նոր զարգացումներին եւս իրազեկ է:

«Բանակցությունները չպետք է դոփեն տեղում» վերնագիրն արդեն հասկանալի է դարձնում հոդվածի ուղղվածությունը եւ անկեղծությունը. դժվար է Արցախում, Հայաստանում կամ Ադրբեջանում գտնել որեւէ քաղաքական կամ հասարակական գործիչ, որ համաձայն չի լինի այս գնահատականին՝ Հայաստան - Ադրբեջան բանակցությունները Արցախի հիմնահարցի կարգավորման վերաբերյալ դոփում են տեղում: Ճիշտ է, այս գնահատականը միշտ փորձ է կատարվում մեղմել երկու պետությունների նախընտրական-ներքաղաքական կրքերով, սակայն եւ Հայաստանի, եւ Ադրբեջանի պարագայում ընտրությունները մեծ չափով կանխատեսելի են, եւ մեծ անակնկալներ չեն մատուցում:

Առաջին անգամ Կազիմիրովը իբրեւ դրսի փորձագետ, բարձրաձայն արձանագրում է, որ Ալիեւ-Քոչարյան բանակցությունների ձեւաչափը սպառված է, նշենք, որ թե Հայաստանի, թե Ադրբեջանի ընդդիմության շատ ներկայացուցիչներ այս մասին բազմիցս պնդել են: Սակայն նման պնդումները միշտ էլ որակվել են իբրեւ իշխանատենչության կամ իշխանափոխության ձգտում: Ռուս դիվանագետը իրավացիորեն կարծում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները միշտ էլ ծանրաբեռ կլինեն ներքաղաքական խնդիրների լուծմամբ, ուստի հարկ կլինի նոր բանակցային ձեւաչափ ընտրել, դիցուք անպորտֆել նախարարների նշանակմամբ: Փաստենք, որ եւ Ալիեւը, եւ Քոչարյանն այսօր իսկ ունեն իրենց անձնական ներկայացուցիչները, որոնք հանդիպել են բանակցային սեղանի շուրջ՝ առաջին դեմքերի փոխարեն: Այսինքն՝ երկու պետությունների նախագահներն էլ զգացել են դժվարին բանակցություններում իրենց փոխարինելու անհրաժեշտությունը:

Արցախի հիմնահարցի կարգավորման անպորտֆել նախարարների նշանակումը, եւ այս պատճառաբանությամբ բանակցային նոր ձեւաչափի հաստատումը կարող է ավելի փափուկ դարձնել Լեռնային Ղարաբաղին իբրեւ բանակցությունների կողմ ներգրավելու հարցը:

Հայաստանի համար Արցախի հակամարտության կարգավորման նոր այս մոտեցումների ի հայտ գալը չափազանց կարեւոր է կրկին օրակարգում հայտնված եւ գրեթե շեքսպիրյան հնչեղություն ստացած փուլային կամ փաթեթային լուծման լինե՞լ, թե՞ չլինելու առումով, ինչպես արքայազն Համլետը կասեր.«Ո՞րն է հոգեպես առավել ազնիվը», մենք հավելենք՝ առավել հայանպաստը: ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը վերջերս հայտարարեց, թե 97 թվականի տարբերակին շատ մոտ փաստաթուղթ է քննարկվում, 5-6 շրջան են վերադարձնում Ադրբեջանին, բայց Ղարաբաղի կարգավիճակի հարցը չկա, փոխարենը՝ Լաչին- Քելբաջար, Մեղրի տարածքների վերահսկողության հարց կա ...Պաշտոնապես հստակ հերքում չեղավ այս պնդմանը:

> *Բոլորը հիշում են, որ 97-ի փուլային տարբերակը ներքաղաքական եւ հետընտրական դժգոհությունների հետ մեկտեղ դարձավ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ նրա թիմի հրաժարականի պատճառը: Այսօր՝ 2003-ին, Ռոբերտ Քոչարյանը եւ նրա թիմը նույնքան ծանրաբեռ են ներքաղաքական եւ հետընտրական հոգսերով, ուստի եւ նույնքան խոցելի՝ թե՛ ներսի, թե՛ դրսի համար:*

Կազիմիրովի կողմից առաջարկվող փուլային տարբերակում Արցախի կարգավիճակի որոշումը հետաձգվում է: Փոխարենը՝ առաջ է մղվում մեզ համար ազատագրված, նրանց բնորոշմամբ գրավյալ տարածքների առանց նախապայմանների ապառազմականացման խնդիրը, Հայաստանի ապաշրջափակումը: Այսպիսով, «տարածքներ՝ կարգավիճակի դիմաց» հայաստանյան հաղթաթուղթը մերժվում է նաեւ ՌԴ-ի կողմից:

Այստեղ մեջբերենք «Իզվեստիա» թերթի օգոստոսի 15-ի համարում Ադրբեջանի նոր վարչապետ եւ ապագա նախագահ Իլհամ Ալիեւի հարցազրույցից մի հատված, ուր նա Հայաստանի հետ բանակցելու նախապայմանն է պնդում .«Նախ՝ գրավյալ տարածքների լիակատար՝ ազատագրում, ապա՝ բանակցություններ Ղարաբաղի կարգավիճակի մասին: Սա միակ ընդունելի ճանապարհն է, առանց դրա մենք ոչնչի մասին չենք պայմանավորվի»: Իլհամ Ալիեւը նշում է նաեւ, որ իրենք ցանկանում են ինտենսիվ դարձնել դանդաղած բանակցային գործընթացը.«Մոտակա ժամանակում ամեն ինչ պետք է լուծվի»: Ալիեւ վարչապետը հետաքրքիր ձեւակերպում է տալիս տարածքների վերադարձի անհրաժեշտությանը.«Չ՞է որ այնտեղ ոչ ոք չի ապրում, այնտեղ միայն մերկ ռազմակետեր են»:

Ահա եւ բանալին. Հայաստանը նոր մարտահրավերի առջեւ է, պետք է փորձել հստակեցնել գերտերությունների կողմից մեզ բավական պարզ հասցեագրվող առաջարկները եւ մշակել համապատասխան դիրքորոշում: Այս խնդիրը միաժամանակ պետք է լուծեն եւ իշխանությունները, եւ ընդդիմությունը: Հապաղումը ծանրագույն հետեւանքներ կունենա...